ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«26» 02 2026 թ.
№ ՊՆՏ 2/342

«ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ-ին /ՀՎՀՀ 00001672/
ՀՀ, ք. Երևան, Հ. Հակոբյան 3
Էլ. փոստի հասցե՝ info@mergelyan.com
Հեռ.՝ +(374 15) 27 27 00

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի միջև 26.12.2018թ. կնքված N ՄԱԱՇՁԲ-13-32 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ-ն աշխատանքների կատարման արդյունքում պետք է մատակարարեր 100 միավոր արտադրանք, որը չի կատարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.5 կետի «բ» ենթակետը՝ (կատարողը բազմիցս խախտել է սույն պայմանագրով սահմանված Աշխատանքի կատարման ժամկետները) ՀՀ պաշտպանության նախարարությունը 25.02.2026թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ԵՐՄՄԳՀԻ» ՓԲԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ պետական բյուջեի **900005028106** հաշվեհամարին փոխանցել **18 759 000 ՀՀ դրամ**՝ որպես տույժ (Պայմանագրի 6.3 կետի համաձայն) և **97 500 ՀՀ դրամ**՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.4 կետի համաձայն) որը հաշվարկված է մինչև 06.12.2024թ. ներառյալ: Ինչպես նաև Պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծման արդյունքում ՀՀ պետական բյուջեի **900005570115** հաշվեհամարին անհրաժեշտ է վճարել /վերադարձնել/ **19 500 000 ՀՀ դրամը**՝ ընկերությանը հատկացված կանխավճարը: Նշված գումարների վճարված լինելը հավաստող փաստաթղթերի բնօրինակները անհրաժեշտ է մինչև 2026թ. մարտի 6-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2071 սենյակ:

Հայտնում եմ, որ վերոնշյալ գումարները Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Տեղեկացնում եմ նաև, որ վերոգրյալի համաձայն «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ն կընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարգանքով՝

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ